ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«10» հոկտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-41/15 բողոքը քննող

Հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 23.01.2015թ. թիվ 73-1/755427-15 գրությունը ներկայացված «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 23.01.2015թ. թիվ 73-1/755427-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ առաջարկելով ուսումնասիրել «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ)

ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերջինիս Ցուցակում ներառելու համար:

2.«Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 30.01.2015թ. թիվ 09/032.138 գրությամբ դիմել է «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ին:

Ի պատասխան Կենտրոնի 30.01.2015թ. թիվ 09/032.138 գրության՝ Մասնակիցը 18.02.2015թ. գրությամբ հայտնել է, որ 20 հոկտեմբերի 2014թ. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ի միջև կնքվել է գնման «ԲԵՑ-ՇՀԱՊՁԲ-14/44» պայմանագիրը: Պայմանգրի 9.1 կետը նախատեսում է պայմանագրի ուժի մեջ մտնելու պայմանները, որոնցից մեկն է գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական միջոցների նախատեսումը: Մատակարարման ժամկետը, ըստ պայմանագրի, սահմանված է 31 աշխատանքային օր՝ պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

Մասնակիցը վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ պայմանագրի կնքումից հետո «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ի միջև որևէ համաձայնագիր չի կնքվել ֆինանսական միջոցների նախատեսման վերաբերյալ և որևէ կերպ Ընկերությանը դրա մասին չի տեղեկացվել, ուստի մատակարարման ժամկետների հիմնավորմամբ պայմանագրի միակողմանի լուծումը Ընկերությունը համարում է անհիմն: Այնուամենայնիվ Ընկերությունը՝ չնայած համաձայնագրի բացակայությանը մատակարարել է պայմանագրով նախատեսված որոշակի ծավալի ապրանքներ՝ իր վրա վերցնելով ֆինանսական միջոցների բացակայության ռիսկը:

3. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 05.02.2015թ. թիվ 13-01/138 գրությամբ հայտնել է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր»

ՓԲԸ-ի և «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ի միջև 20.10.2014թ. կնքվել է N Բ110/14 գնման պայմանագիր՝ համակարգչի և համակարգչային սարքավորումների ձեռքբերման վերաբերյալ: Պայմանագրով ապրանքների մատակարարման ժամկետը սահմանվել է 31 աշխատանքային օր՝ մինչև 2014թ. դեկտեմբերի 1-ը ներառյալ: Սակայն «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ն մինչև սահմանված ժամկետի ավարտը մատակարարել է պայմանագրի 4.1 կետով սահմանված ապրանքի քանակի 15,2%-ը՝ խախտելով պայմանագրի 2.2 կետով սահմանված ժամկետը: «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն հայտնել է, որ ելնելով տվյալ հանգամանքից և հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետի բ) ենթակետով վերապահված գնորդի իրավունքը, 2014թ. դեկտեմբերի 5-ին միակողմանի լուծել է պայմանագիրը և այդ մասին 05.12.2014թ. N 13-01/2579 գրությամբ ծանուցել է «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ին:

4. <u>ՍՑ-ԳԲԽ-41/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 23.01.2015թ. թիվ 1/73-1/755427-15, գրությամբ ներկայացված «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ի միջև 20.10.2014թ. կնքվել է «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-14/4 ծածկագրով համակարգչի և համակարգչային սարքավորումների ձեռքբերման N Բ 110/14 գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

□ Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածի՝ գնման ժամանակացույցի 1-ին չափաբաժնով նախատեսված ***29 հատ*** «Համակարգիչ լրակազմ i3 (բրենդային հավաքածու)»՝ 10 310 040 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, 3-րդ չափաբաժնով նախատեսված ***3 հատ*** «Դյուրակիր համակարգիչ (Notebook)»՝ 1 227 660 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, 4-րդ չափաբաժնով նախատեսված **36 հատ** «Անխափան սնուցման սարք (UPS)»՝ 792 000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, 5-րդ չափաբաժնով նախատեսված ***33 հատ*** «Տպիչ լազերային մոնոխրոմ»՝ 1 617 000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, 8-րդ չափաբաժնով նախատեսված ***1 հատ*** «Սերվեր»՝

4 800 000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, 9-րդ չափաբաժնով նախատեսված ***1 հատ*** «Անխափան սնուցման սարք 2200VA (UPS)»՝ 510 000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով և 12-րդ չափաբաժնով նախատեսված ***2 հատ*** «HDMI լար»՝ 9900 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով գնման ենթակա ապրանքների մատակարարման համար վերջնաժամկետ է սահմանվել՝ Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 31 աշխատանքային օր՝ մինչև 2014թ. դեկտեմբերի 1-ը ներառյալ:

- Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 31 աշխատանքային օրվա դրությամբ՝ մինչև 2014թ. դեկտեմբերի 1-ը ներառյալ, «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ն Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքներից չի մատակարարել 1-ին չափաբաժնով նախատեսված **29 հատ** «Համակարգիչ լրակազմ i3 (բրենդային հավաքածու)», 3-րդ չափաբաժնով՝ ***3 հատ*** «Դյուրակիր համակարգիչ (Notebook)», իսկ 8-րդ չափաբաժնով՝ ***1 հատ*** «Սերվեր»:

- «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն Ընկերությանը հասցեագրված 05.12.2014թ. թիվ 1301/2579 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով Ընկերության կողմից վերը նշված ապրանքատեսակները մինչև Պայմանագրի գնման ժամանկաացույցով նախատեսված վերջնաժամկետը (Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 31 աշխատանքային օր՝ մինչև 2014թ. դեկտեմբերի 1-ը ներառյալ) չմատակարարելու փաստը՝ Պատվիրատուն 05.12.2016թ. միակողմանի լուծում է գնման Պայմանագիրը:

- Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 և 3.1.4.1 կետերը, 05.12.2014 լուծել է «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ի հետ 20.10.2014թ. կնքված «ԲԵՑ-ՇՀԱՊՁԲ-14/44» ծածկագրով համակարգչի և համակարգչայի սարքավորումների ձեռքբերման պայմանագիրը, որի մասին գրությամբ տեղեկացվել է Մասնակիցը:

2. Պայմանագրի 2.2 կետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ն) Ապրանքը մատակարարում է Գնորդին (Ստացողին) Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան՝ 31 աշխատանքային օրվա ընթացքում, որի հաշվարկը կատարվում է սույն Պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է Պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

4. Պայմանագրի 3.1.4.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա. Գնորդի համար ընդունելի ժամկետում մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ. Խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

5. Պայմանագրի N 2 հավելված՝ գնման ժամանակացույցի համաձայն՝ Մասնակիցը պարտավորվում է ապրանքը մատակարարել 31 աշխատանքային օրվա ընթացքում, որի հաշվարկը կատարվում է սույն Պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնվում է Պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

6. Պայմանագրի 9.3 կետի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

7. Համաձայն գործում առկա «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 05.02.2015թ. 13-01/138 գրության՝ «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ն մինչև սահմանված ժամկետի ավարտը մատակարարել է Պայմանգրի 4.1 կետով սահմանված ապրանքի քանակի 15,2 %-ը՝ խախտելով պայմանագրի 2.2 կետով սահմանված ժամկետը:

8. «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ն 02.12.2014թ. գրությամբ դիմել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին՝ առաջարկելով երկարաձգել ապրանքի մատակարարման ժամկետը:

9. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն՝ ի պատասխան «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ի 02.12.2014թ. գրության, 05.12.2014թ. 13-01/2579 գրությամբ «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ին տեղեկացրել է, որ Պայմանագրի 9.3 կետի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը, սակայն «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ի կողմից առաջարկը ներկայացվել է մատակարարման ժամկետը լրանալուց հետո:

5. **<u>ՍՑ-ԳԲԽ-41/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հիմքերը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին ***նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

Պայմանագրի 3.1.4.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա. Գնորդի համար ընդունելի ժամկետում մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ. Խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ի միջև 20.10.2014թ. կնքվել է «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-14/4 ծածկագրով համակարգչի և համակարգչային սարքավորումների ձեռքբերման N Բ 110/14 գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Ընկերությունը պարտավորվել է մատակարարել Պայմանագրերի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1 տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները՝ Հավելված N 2 գնման ժամանակացույցով սահմանված ժամկետներում և քանակությամբ:

Ընկերության կողմից Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 2 գնման ժամանակացույցով սահմանված ժամկետներում չեն մատակարարվել՝ 1-ին չափաբաժնով նախատեսված **29 հատ** «Համակարգիչ լրակազմ i3 (բրենդային հավաքածու)», 3-րդ չափաբաժնով՝ ***3 հատ*** «Դյուրակիր համակարգիչ (Notebook)», իսկ 8-րդ չափաբաժնով՝ ***1 հատ*** «Սերվեր» ապրանքատեսակները:

Պատվիրատուն՝ վերը նշված ապրանքներն Ընկերության կողմից չմատակարարելու հիմքով ***05.12.2014թ. միակողմանի լուծել է*** «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ի հետ 20.10.2014թ. կնքված «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-14/44» ծածկագրով պայմանագիրը:

Պայմանագրի 2.2 կետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ն) Ապրանքը մատակարարում է Գնորդին (Ստացողին) Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան՝ 31 աշխատանքային օրվա ընթացքում, որի հաշվարկը կատարվում է սույն Պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է Պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

Պայմանագրի 9.3 կետի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

Համաձայն գործում առկա «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 05.02.2015թ. 13-01/138 գրության՝ «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ն մինչև սահմանված ժամկետի ավարտը մատակարարել է Պայմանգրի 4.1 կետով սահմանված ապրանքի քանակի 15,2 %-ը՝ խախտելով պայմանագրի 2.2 կետով սահմանված ժամկետը:

«Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ն 02.12.2014թ. գրությամբ դիմել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին՝ առաջարկելով երկարաձգել ապրանքի մատակարարման ժամկետը:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն՝ ի պատասխան «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ի 02.12.2014թ. գրության, 05.12.2014թ. 13-01/2579 գրությամբ «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ին տեղեկացրել է, որ Պայմանագրի 9.3 կետի համաձայն՝

ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը, սակայն «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ի կողմից առաջարկը ներկայացվել է մատակարարման ժամկետը լրանալուց հետո:

Պատվիրատուն հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ն խախտել է 20.10.2014թ. «ԲԵՑ-ՇՀԱՊՁԲ-14/4» ծածկագրով կնքված N Բ110/14 գնման պայմանագրի 2.2 կետով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը, ղեկավարվելով Պայմանագրի 3.1.4 և 3.1.4.1 կետերով՝ ***05.12.2014թ. միակողմանի լուծել է*** գնման պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը արձանագրում է, որ «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ն «ԲԵՑ-ՇՀԱՊՁԲ-14/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով սահմանված, պայմանագրով նախատեսված պարտավորության ավելի քան մեկ անգամ խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «ա» ենթակետով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գնման գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Այսպիսով, Կենտրոնն արձանագրում է, որ «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ ***Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը,*** սակայն ***Ընկերությանը*** Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ ***խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի*** ի հայտ գալու պայմաններում: Մինչդեռ, մինչև վերոհիշյալ եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-41/15 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելը՝ Կենտրոնը չունի որևէ տեղեկատվություն Ընկերությանը վերագրվող

խախտում թույլ տալու պահից (***05.12.2014թ.***) մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ:

Նման պայմաններում խախտումը թույլ տալու պահից (***05.12.2014թ.***) հաշված մեկ տարվա ընթացքում «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ի կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում Ընկերությունը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև վերոհիշյալ եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-41/15 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելն առկա չէ որևէ տեղեկատվություն «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 05.12.2015թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ինչը հանդիսանում է մասնակցին Ցուցակում ներառելու մասին որոշում կայացնելու համար երկրորդ պարտադիր պայմանը, ուստի առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 23.01.2015թ. թիվ 73-1/755427-15 գրությամբ «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04718853) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝
Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-41/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Գևորգյան